«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Օտար լեզու առարկայի առանձնահատկությունները և ուսուցման նպատակները

Առարկա՝ *Անգլերեն*

Ուսուցիչ՝ *Հասմիկ Ասատրյան*

Դպրոց՝ Մ.Մելքոնյանի անվան հ.11 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Անուշ Խաչիկյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն…….3
2. Օտար լեզու առարկայի առանձնահատկությունները……..4
3. Օտար լեզվի ուսուցման նպատակները…….....9
4. Եզրակացություն……..……13
5. Օգտագործված գրականության ցանկ ……...15

Ներածություն

Օտար լեզվի ուսուցման գործընթացը ակտիվ է և բարդ, որի վրա մեծ ազդեցություն ունեն սովորողի տարիքը, հիշողությունը, կրթական մակարդակը, կենտրոնացումը, ուշադրությունը, աշխատասիրությունը, շրջապատող միջավայրը և այլն:

«Օտար լեզու» առարկայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրա դասավանդումը – դա նախ և առաջ խոսքային գործունեության ուսուցում է, այսինքն այս ուսուցման արդյունքում ենթադրվում է, որ ուսոցանվող անձիք պետք է կարողանան շփվել օտար լեզվով բանավոր և գրավոր եղանակներով: Այս պարագայում ուսումնական հաստատության խնդիրն է ոչ թե օտար լեզվի տեսական ուսումնասիրությունը և տեսության մատուցումը ուսուցանվողներին, այլ լեզվի պրակտիկ յուրացումը ուսուցանվողների կողմից:

Օտար լեզուն, բացի կրթական և դաստիարակչական գործառույթներից, իրականացնում է նաև կարևոր հաղորդակցային գործառույթ: Ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները և պրակտիկ հմտությունները՝ լեզվի տիրապետման ասպարեզում, իրենց հերթին միջոց են հանդիսանում այլ նպատակների իրագործման համար: Վերջինների թվում առանձնանում են նոր գիտելիքների ձեռք բերումը՝ օտար լեզվով կարդալու և շփվելու ընթացքում և արդյունքում:

Կարևոր խնդիր է կարդալու և բանավոր խոսքի հմտությունների ձևավորումը և առավելագույնս զարգացումը:

Իսկ ընդհանուր կրթական և դաստիարակչական գործառույթները, որոնք բնորոշ են ցանկացած առարկայի ուսուցման գործընթացին, իրականացվում են անմիջապես լեզվական շփման, օտար լեզվի պրակտիկ կիրառության ընթացքում:

Միաժամանակ, ակնհայտ է, որ հանրակրթական դպրոցի պայմաններում դժվար է երեխաներին սովորեցնել ազատ տիրապետել օտար լեզվին, անկաշկանդ արտահայտել սեփական մտքերը և գաղափարները, կարդալ համապատասխան լեզվով ուսումնական և գեղարվեստական գրականություն: Ինչպես և ցանկացած այլ ուսումնական առարկա, օտար լեզու առարկայի ուսուցման հիմնական նպատակն է

սովորեցնել աշակերտներին տիրապետել խոսքային գործունեության տարբեր տեսակներին՝ բանավոր մենախոսություն, երկխոսություն և այլն:

Օտար լեզու առարկայի առանձնահատկությունները

Դնելով օտար լեզվի պրակտիկ յուրացման հիմքը, դպրոցական ուսուցման ընթացքում կարևոր է աշակերտների մոտ լեզվական ընդունակությունների և հմտությունների օպտիմալ ձևավորումը, որի հիման վրա հնարավոր կլինի հետագայում խորացնել և առավել զարգացնել տվյալ օտար լեզվի տիրապետումը: Դա կախված է մեծապես նրանից, թե օտար լեզուն հետագայում ինչպես և ինչ ոլորտում է անհրաժեշտ լինելու տվյալ անձին:

Օտար լեզվի պրակտիկ հմտությունների ուսուցման անբաժան մասն է կազմում ինքնուրույն աշխատանքը, մասնավորապես.

- Բառարաններից օգտվելու կարողություն:
- Քերականական դասագրքի օգնությամբ ինքնուրույն աշխատելու կարողություն:
- Զրուցարաններից օգտվելու կարողություն:

Օտար լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությունը համապատասխանում է զարգացնող կրթության հիմնական դրույթներին: Որպեսզի ուսուցումը զարգացնող լինի, այսինքն ուսուցանվողների մոտ զարգանան ինքնուրույն աշխատանքի հմտությունները և կարողությունները, ինչը հատկապես կարևոր է օտար լեզվի յուրացման գործում, պետք է ապահովվեն ուսուցման գիտակցական, ստեղծագործական և վարժանքային հիմունքները:

Այսպիսով, օտար լեզվի դասավանդման մեջ առավել արդյունավետ կլինեն այն մեթոդները, միջոցները, որոնք մի կողմից կապահովեն լեզվական նյութի տիրապետման հմտությունների ձևավորմանը, իսկ մյուս կողմից բավականաչափ գիտելիքների և հմտությունների պաշար՝ ինքնուրույն աշխատանքի համար: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դպրոցում զարգացվում է ոչ միայն սեփական մտքերը ապահովելու հմտությունը, այլև դիմացինների մտքերը հասկանալու կարողությունը:

Ինչպես հայտնի է, օտար լեզվի ուսուցման մեթոդները կախված են այդ գործընթացի հիմնական նպատակներից և դրանցից բխող խնդիրներից: Համապատասխան այդ նպատակներին, որոնց թվում հատկապես կարևորվում է օտար լեզվի պրակտիկ յուրացման հիմնախնդիրը, ուսուցման բովանդակությունը ձևավորվում է հետևյալ տարրերից.

- Լեզվական նյութի տիրապետման հմտությունների զարգացում;
- Կարողությունների զարգացում խոսքային գործունեության ոլորտում՝ խոսք, դիմացինի խոսքի ընկալում և հասկացում, ընթերցում և այլն:

Խոսելով օտար լեզվի ուսուցման նպատակների մասին, կարելի է առանձնացնել լզվական հմտությունների և կարողությունների զարգացման չորս մակարդակներ, որոնցից յուրաքանչյուրում դրսևորվում է լեզվական նյութի տիրապետման նպատակները.

- Սկզբնական աստիճան, որը ենթադրում է ծանոթություն նոր ուսումնական օբյեկտի հետ, տվյալ դեպքում՝ լեզվական նյութի:
- Երկրորդ աստիճան, որի նպատակն է ուսուցանվող անձանց սովորեցնել կիրառել նոր լեզվական նյութը ծանոթ պայմաններում և իրավիճակներում:
- Երրորդ աստիճան, որի պարագայում նպատակ է դրվում ուսուցանվող անձանց սովորեցնել կիրառել լեզվական նյութը նոր պայմաններում, որոնք համանման են ծանոթ միջավայրին;
- Չորրորդ աստիճան, որի նպատակն է ուսուցանվող անձանց կողմից լեզվական նյութի ազատ կիրառումը բոլորովին անծանոթ միջավայրում և պայմաններում:

Օտար լեզվի տիրապետման հմտությունների և կարողությունների չորս մակարդակներում առկա են ուսումնական գործունեության և դասավանդման մեթոդաբանության իրենց յուրահատկությունները և հստակ եղանակները:

Հիմնվելով օտար լեզվի ուսուցման ոլորտում իրականացված դիդակտիկ հետազոտությունների տվյալների վրա և հաշվի առնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունները, ներկայումս կիրառվում են օտար լեզվի դասավանդման հետևյալ հիմնական մեթոդները.

- Բացատրական-ցուցադրական մեթոդ:

- Վարժեցման մեթոդ՝ լեզվի տիրապետման հմտությունների ձևավորման համար:
- Պրակտիկ մեթոդ՝ համանման պայմաններում լեզվական նյութի օգտագործման համար:
- Որոնողական լեզվական գործունեության մեթոդ՝ սեփական գաղափարների արտահայտման հմտությունների ձևավորման համար:
- Որոնողական լեզվական գործունեության մեթոդ՝ օտար լեզվով արտահայտված խոսքը լսելու և ընկալելու համար:

Այսպիսով, ներկայումս տարածված հայեցակարգ է հանդիսանում այն դրույթը, որ օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը նրա պրակտիկ կիրառումն է: Այս հայեցակարգը առաջ է քաշվել դեռևս նախորդ դարի 80-ական թվականներին: Այդ ժամանակաշրջանում պրակտիկ խնդրի առաջ քաշումը և բանավոր խոսքի զարգացման առաջնահերթությունը բերել էին նրան, որ ուսումնական հաստատություններում գրեթե անդրադարձ չէր կատարվում օտար լեզվի տեսական հիմունքներին և դրանց ուսուցմանը: Իսկ դա, իր հերթին, զրոյական աստիճանի էր հանգեցնում օտար լեզվի հաղորդակցական արժեքը, դրա ընդհանուր կրթական և դաստիարակչական գործառույթները, որպես ուսուցանվող առարկայի:

Եվ քանի որ օտար լեզվի ուսուցման նպատակները այդ ժամանակաշրջանում կտրուկ փոփոխությունների ենթարկվեցին, փոփոխվեցին նաև դրանց ուսուցանման մեթոդները, ուսուցանման ընդհանուր բովանդակությունը և նշանակությունը:

Օտար լեզվի ուսուցման սկզբնական շրջանում ուսուցողական հիմնական աշխատանքն ուղղվում է նրան, որպեսզի ուսուցանվող անձանց մոտ ձևավորվեն հմտություններ՝ յուրացնելու հիմնական տիպային արտահայտությունները և բառակապակցությունները, որոնք լայն կիրառություն ունեն օտար լեզվի շրջանակներում:

Քանի որ խոսելը – դա խոսքային գործունեության այնպիսի տեսակ է, որը կարող է զարգանալ և կայանալ միայն ուսուցչի հետ անմիջական հաղորդակցության և նրա վերահսկողության պայմաններում, ապա դասարանում հիմնական ժամանակը պետք է հատկացվի խոսքի զարգացմանը, խոսքային հմտությունների ձևավորմանը:

Այս փուլում գիրը, քերականությունը, որպես ուսուցման մի մաս, շատ հանգիստ կարող է հանձնարարվել, որպես տնային կամ ինքնուրույն աշխատանք, քանի որ այս պարագայում գրի զարգացումը հանդիսանում է օտար լեզվի դասավանդման միջոց, ոչ թե նպատակ: Իսկ գրավոր աշխատանքները, որոնք կատարվում են տանը, ինքնուրույն աշխատանքի շրջանակներում, նպաստում են ստացած գիտելիքների կրկնությանը և ամրապնդմանը:

Քանի որ օտար լեզվով կարդալու հմտությունը հանդիսանում է ոչ պակաս կարևոր գործնական հմտություն, քան բանավոր խոսքն է, ապա դրան ևս բավականաչափ ժամանակ և ուշադրություն է պետք հատկացնել դասաժամին: Խոսքի ճանաչումը և ընկալումը, որպես կանոն, շատ ավելի հեշտ է տրվում և պակաս ջանքեր է պահանջում, քան խոսքի վերարտադրությունը:

Եվ այսպես, երբ խոսում ենք օտար լեզվի ուսուցման և դասավանդման հիմնական նպատակների մասին, ապա հարկ է նշել ,որ եթե նախկինում օտար լեզվի դասավանդման բնույթն աշխարհում պայմանավորված էր առաջնահերթ սոցիալական պահանջով՝ ելնելով տնտեսական, քաղաքական և միջազգային կապերից, ապա այսօր իրավիճակը կտրուկ փոխվել է:

Այսօրվա դրությամբ դիտվում է կայուն միտում՝ նպատակաուղղված կերպով դպրոցների և ԲՈՒՀ-երի սովորողներին պատրաստել միջազգային քննություններին: Ընդ որում քննություններն այս պարագայում չեն հանդիսանում ուսումնական գործընթացի վերջնական նպատակը, այլ հանդես են գալիս, որպես լեզվական առաջընթացի օբյեկտիվ ցուցանիշ:

Լեզվաբանական կոմպետենտությունը ենթադրում է լեզվի վերաբերյալ ֆորմալ գիտելիքների և դրանց համապատասխան հմտությունների որոշակի ամբողջության առկայություն: Իհարկե, բոլոր գիտելիքները, այդ թվում նաև քերականական, լեկսիկական և այլն, ուսումնասիրվում են այն նպատակով, որ հետագայում դրանք փոխակերպվեն կայուն խոսքային արտահայտությունների, այսինքն՝ դրանք ունեն արտահայտված խոսքային ուղղվածություն:

Այսպիսով, կարելի է ասել, որ օտար լեզվի դասավանդման մեջ շեշտը դրվում է ոչ թե լեզի, որպես ամբողջական համակարգի վրա, այլ հենց խոսակցական,

բանավոր հմտությունների ձևավորման և զարգացման վրա: Սակայն խոսքը միշտ էլ իրավիճակային է, իսկ ցանկացած իրավիճակ, իր հերթին, որոշվում է վայրով և ժամանակով, հանդիսատեսի և լսարանի առանձնահատկություններով, շփման նպատակներով և այլն: Այս համատեքստում որպեսզի շփման խնդիրները ադեկվատ լուծում ստանան յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, անհարժեշտ է կարողանալ կատարել ընտրությունն տարբեր լեզվական ձևերի միջև, կիրառել դրանք և հարմարեցնել համատեքստին:

Հանրապետության հանրակրթական դպրեցներում դասավանդվում են ռուսերեն,անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներ: 8-րդ և 9-րդ դասարանների շրջանակներում կատարած հետազոտությունների արդյունքում պարզվեց,որ աշակերտները ցանկություն են հայտնել սովորել նաև թուրքերեն, պարսկերեն և վրացերեն: Հարևան պետությունների մշակույթին և ազգային արժեքներին ծանոթանալու նպատակով: Աշակերտները ցանկություն են հայտնել նաև, որ օտար լեզուների ուսուցումը սկսել 1-ին դասարանից:

Եվ այսպես, լեզուն և խոսքը այն կարևոր գործոններն են, որոնք օգնում են մարդուն ցանկացած իրավիճակում բարենպաստ պայմաններ ստեղծել սեփական բարեկեցության համար: Օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը ներկայիս իրականության մեջ կայանում է նրանում, որպեսզի անձը կարողանա տիրապետել օտար լեզվին պրակտիկ մակարդակում, կիրառել լեզվական և խոսքային գիտելիքները՝ սեփական մտքերը և գաղափարներն արտահայտելու, դիմացինի խոսքը հասկանալու և ընմբռնելու համար:

Առևտրի, զբոսաշրջությանը, միջազգային հարաբերություններին,արտաքին տնտեսական կապեչի զաչգացմանն ու ընդլայնմանը մեծապես նպաստում էօտար լեզվի իմացությունը: Այն օժանդակում է գործարար մարդկանց համագործակցություն հաստատելու իրենց արտասահմանյան գործընկերների հետ:

Օտար լեզու սովորելու անհրաժեշտությունը նույնքան հին պատմություն ունի,
որքան որ մարդկությունը:

Օտար լեզվի ուսուցման նպատակները

Օտար լեզվի ուսուցման նպատակներն են.

- հաղորդակցական կարողությունների զարգացում,
- ազատ տեղաշարժման իրավունքից օգտվելու հնարավորությունների իրականացում,
- ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, սովորույթների, ավանդույթների իմացություն,
- սովորողների մոտ սեփական երկրի և այլ ազգերի մշակույթների հանդեպ հարգանքի ձևավորում,
- ինքնակրթությամբ զբաղվելու կարողության ձևավորում:

Օտար լեզվի յուրացման համար ուսուցիչն ու սովորողը պետք է հետևեն ուսումնառության ընթացքում առավել հարմար յուրացման ոճերին և մեթոդներին:

Օտար լեզվի յուրացման ոճը հոգեկան և մտավոր գործողությունների այն ընտրությունն է, որ կատարում է անհատը օտար լեզու սովորելիս: Այն պայմանավորված է անձի հոգետիպով , ընդունակություններով և տրամադրվածությամբ: Լեզվի յուրացման ոճերը սերտորեն կապված են ճանաչողության ոճերի (տեսողական, լսողական ընկալում), անձի հուզականության և ինքնակազմակերպման (ռեֆլեքսիվ, իմպուլսիվ) առանձնահատկությունների հետ:

Սովորողը կամ մասնագետը, կոնկրետ միջոցներ, պայմանների, ժամկետների հաշվառումով լեզվուսուցման անհատակն ծրագիր կազմելիս գիտակցորեն կազմում են լեզվուսուցման ռազմավարությունները: դրանք վեցն են.

- ճանաչողական
- հիշողական

- մետաճանաչողական
- կոմպենսատոր
- հուզական
- հաղորդակցական

Լեզվաուսուցման մեջ հնարավոր չէ օգտվել բացառապես մեկ տիպի ռազմավարությունից, բայց հնարավոր է սահմանել դրանց հարաբերակցությունը և որոշել գերակա ռազմավարությունները:

Ուսուցման մեթոդների կիրառությունը

Շատ կարևոր է ճիշտ և նպատակահարմար յուրացման մեթոդի կիրառությունը: Ամեն մեթոդ ունի իր կիրառության և արդյունավետության աստիճանը:

Կարևոր է նշել **քերականական թարգմանության մեթոդը (The Grammar Translation Method):** Այս մեթոդը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական [1]կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության պրակտիկան:



Աուդիո-լեզվական մեթոդի (Audio-lingual method) էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:



Լեզվի իրավիճակային ուսուցումը (բանավոր մոտեցում) (Situational language teaching oral approach) հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգատգործող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում գործնականում: Այստեղ բանավոր խոքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:



Ուղղորդված փորձառություն (Directed practice) դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր սովորելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

Ուղղակի մեթոդը (The direct method) նախատեսվում է օտար լեզվի ուսուցանումը մայրենիի լեզվի նման, այսինքն ինքը սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է:

Խոսակցական ուսուցումը (Communicative language teaching) նախատեսվում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու, այև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները:

Միայն արտասանության, քերականության և բառապաշարին ուշադրություն դարձնելով չես կարող խորությամբ ուսումնասիրել լեզուն:Այդ բանին մեծապես նպաստում են ազգային տոներին նվիրված դասերը՝Halloween,Christmas:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, երբ խոսում ենք օտար լեզվի ուսուցման և դասավանդման հիմնական նպատակների մասին, ապա հարկ է նշել հետևյալը: Եթե նախկինում օտար լեզվի դասավանդման բնույթն աշխարհում պայմանավորված էր առաջնահերթ սոցիալական պահանջով՝ ելնելով տնտեսական, քաղաքական և միջազգային կապերից, ապա այսօր իրավիճակը կտրուկ փոխվել է:

Ակնհայտ է, որ այսօրվա դրությամբ դիտվում է կայուն միտում՝ նպատակաուղղված կերպով դպրոցների և ԲՈՒՀ-երի սովորողներին պատրաստել միջազգային քննություններին: Ընդ որում քննություններն այս պարագայում չեն հանդիսանում ուսումնական գործընթացի վերջնական նպատակը, այլ հանդես են գալիս, որպես լեզվական առաջընթացի օբյեկտիվ ցուցանիշ:

Լեզվաբանական կոմպետենտությունը ենթադրում է լեզվի վերաբերյալ ֆորմալ գիտելիքների և դրանց համապատասխան հմտությունների որոշակի ամբողջության առկայություն: Իհարկե, բոլոր գիտելիքները, այդ թվում նաև քերականական, լեկսիկական և այլն, ուսումնասիրվում են այն նպատակով, որ հետագայում դրանք փոխակերպվեն կայուն խոսքային արտահայտությունների, այսինքն՝ դրանք ունեն արտահայտված խոսքային ուղղվածություն:

Այսպիսով, կարելի է ասել, որ օտար լեզվի դասավանդման մեջ շեշտը դրվում է ոչ թե լեզի, որպես ամբողջական համակարգի վրա, այլ հենց խոսակցական, բանավոր հմտությունների ձևավորման և զարգացման վրա: Սակայն խոսքը միշտ էլ իրավիճակային է, իսկ ցանկացած իրավիճակ, իր հերթին, որոշվում է վայրով և ժամանակով, հանդիսատեսի և լսարանի առանձնահատկություններով, շփման նպատակներով և այլն: Այս համատեքստում որպեսզի շփման խնդիրները ադեկվատ լուծում ստանան յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, անհարժեշտ է կարողանալ կատարել ընտրությունն տարբեր լեզվական ձևերի միջև, կիրառել դրանք և հարմարեցնել համատեքստին:

Հանրապետության հանրակրթական դպրեցներում դասավանդվում են ռուսերեն,անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներ: 8-րդ և 9-րդ դասարանների շրջանակներում կատարած հետազոտությունների արդյունքում պարզվեց,որ աշակերտները ցանկություն են հայտնել սովորել նաև թուրքերեն, պարսկերեն և վրացերեն:

Հարևան պետությունների մշակույթին և ազգային արժեքներին ծանոթանալու նպատակով: Աշակերտները ցանկություն են հայտնել նաև, որ օտար լեզուների ուսուցումը սկսել 1-ին դասարանից:

Այսպիսով, լեզուն և խոսքը այն կարևոր գործոններն են, որոնք օգնում են մարդուն ցանկացած իրավիճակում բարենպաստ պայմաններ ստեղծել սեփական բարեկեցության համար: Օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը ներկայիս իրականության մեջ կայանում է նրանում, որպեսզի անձը կարողանա տիրապետել օտար լեզվին պրակտիկ մակարդակում, կիրառել լեզվական և խոսքային գիտելիքները՝ սեփական մտքերը և գաղափարներն արտահայտելու, դիմացինի խոսքը հասկանալու և ըմբռնելու համար:

Առևտրի, զբոսաշրջությանը, միջազգային հարաբերություններին,արտաքին տնտեսական կապերի զարգացմանն ու ընդլայնմանը մեծապես նպաստում էօտար լեզվի իմացությունը: Այն օժանդակում է գործարար մարդկանց համագործակցություն հաստատելու իրենց արտասահմանյան գործընկերների հետ:

Օտար լեզու սովորելու անհրաժեշտությունը նույնքան հին պատմություն ունի, որքան մարդկությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Душеина Т.В. "Проектная методика на уроках иностранного языка". ИЯШ, 2003, №5
2. Пассов Е.И. Урок иностранного языка в средней школе. - М.: Просвещение, 1988
3. Полат Е.С. Метод проектов на уроках иностранного языка/ Иностранные языки в школе - № № 2, 3 – 2000
4. Соловова Е.Н. Методика обучения иностранным языкам: базовый курс лекций: пособие для студентов пед. вузов и учителей. - 3-е изд. - М.: Просвещение, 2005